Ֆոքսիկի արկածները Ինտերլանդիայում

Անվտանգ ինտերնետ

Դասարան՝ I, II, III

Դասի նպատակը՝ տարրական դասարանների սովորողների ծանոթացում ինտերնետում անվտանգ աշխատանքի հետ, կիրթ և պատասխանատու օգտագործողի դաստիարակում

Դասի խնդիրները՝

1) Ինտերնետի օգտագործման հնարավորությունների վերաբերյալ սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացում

Ինտերնետ.

- Հետաքրքիր և օգտակար ինֆորմացիայի ստացում:
- Շփում և հաղորդակցում:
- Լայն հնարավորություններ սովորելու համար:
- Խաղային գործունեություն:

2) Ինտերնետի օգտագործման ժամանակ հնարավոր վտանգների վերաբերյալ սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացում.

- Վիրուսների ներթափանցում համակարգիչ, համակարգչի վարակում և ինֆորմացիայի կորուստ:
- Վիրավորանքներ այլ օգտագործողների կողմից:
- Ինտերնետում անձնական ինֆորմացիայի տեղադրման արգելք:
- Խաբեբայության հնարավորություն:

3) Աշակերտների կողմից ինտերնետից անվտանգ օգտվելու կանոնների յուրացում:

Կահավորում.

Պրոյեկտոր, անհատական համակարգիչներ

Դիդակտիկ նյութեր. Թիթոնիկներ՝ @ թևերով, ծաղիկներ, PowePoint պրեզենտացիա

Դասի ընթացքը

Դասի փուլերը	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Դիտում
Թեմայի արդիականու-թյունը	Ուսուցիչը հարցնում է, ծանոթ են երեխաները Ինտերլանդիա աշխարհի հետ: Բացատրում է, թե ինչ բան է բրաուզերը: FireFox-ի բառացի թարգմանում: Ծանոթացում Ֆոքսիկի հետ:	Պատասխանում են այն հարցին, թե ինչ կարելի է անել ինտերնետում: Պատասխանը համեմատվում է համակարգչից դուրս բերված պատասխանի հետ: Արդյո՞ք համակարգիչը գիտի այն, ինչ գիտեն աշակերտները:	Սլայդ 2,3
Կանոնների ուսուցում	Ուսուցիչը սկսում է ընթերցել պատմությունը՝ հարցնելով, թե ինչ է նշանակում համաշխարհային սարդոստայն:	Աշակերտները հայտնում են իրենց կարծիքը, կատարում են քննարկումներ, թե արդյոք կարելի է առանց ծնողների թույլտվության միացնել համակարգիչն ու ճամփորդել Ինտերլանդիայով, ինչպես դա արեց Ֆոքսիկը:	Սլայդ 6
	Ուսուցիչը պատմում է, թե ինչպես է Ֆոքսիկը ճամփորդելով հասնում առաջին կանգառ: Հարցնում է, թե ինչու է կարևոր ինտերնետն ուսումնասիրել մեծերի հսկողությամբ: Եվ ի՞նչ կանոններ գիտեն նրանք:	Աշակերտները ասում են այն կանոնները, որոնք իրենց հայտնի են: Քննարկում են, թե ինչու է պետք ինտերնետն ուսումնասիրել մեծերի հսկողությամբ:	Սլայդ 6
	Ուսուցիչը սովորողներին հարցնում է, թե ինչ են նշանակում ուղեցույցի վրա գրվածները:	Աշակերտները պատասխանում են, անհրաժեշտության դեպքում ուսուցիչը բացատրում է «ինտերնետային հասցե » հասկացությունը:	Սլայդ 7
	Հարցնում է աշակերտներին, արդյոք նրանք բեռնել են անծանոթ կայքերից ֆայլեր: Ի՞նչ է պատահել նրանց համակարգչի հետ: Բացատրում է վիրուսի մասին:	Աշակերտները պատմում են դեպքեր, որոնք տեղի են ունեցել իրենց հետ, եթե այդպիսիք եղել են:	Սլայդ 8

	Ուսուցիչը հարցնում է երեխաներին, թե ի՞նչ գիտեն բացվող պատուհանների մասին, որտե՞ղ կարելի է դրանց հանդիպել, ի՞նչ բովանդակություն կարող են ունենալ և ի՞նչ պետք է անել հանդիպելիս:	Աշակերտները պատմում են, թե ինչ պատուհանների են հանդիպել և ինչ են ձեռնարկել նրանք, ինչ արդյունքի է հանգեցրել իրենց գործողությունը:	Սլայդ 9, 10
	Ուսուցիչը հարցնում է, թե ինչու՞ չի կարելի նշել անձնական տվյալները, ի՞նչ վտանգ է դա իր մեջ պարունակում:	Աշակերտները պատասխանում են ուսուցչի հարցերին, կատարում քննարկումներ:	Սլայդ 11
	Ուսուցիչը հարցնում է, թե ինչու՞ չի կարելի բացել անծանոթ հասցեից ստացված նամակները: Ստացե՞լ են աշակերտները նամակներ անծանոթ հասցեներից և ի՞նչ են արել նրանք: Բացատրում է անտիվիրուսի մասին:	Աշակերտները քննարկում են անծանոթ հասցեներից ստացված նամակների ընթերցման հնարավոր հետևանքները:	Սլայդ 12
	Ֆոքսիկի զղջալը: Կներեն արդյո՞ք ծնողները Ֆոքսիկին:	Աշակերտները քննարկում են Ֆոքսիկի արարքները:	Սլայդ 13
	Ուսուցիչը տալիս է հարցեր, իսկ աշակերտները պետք է ընտրեն ճիշտ պատասխանը:	Աշակերտները պատասխանում են հարցերին, կատարում քննարկումներ:	Սլայդ 14-17
Ամփոփում, ընկալում	Ուսուցիչը բաժանում է @ թևիկներով թիթեռնիկներ: Ուսուցիչը աշակերտներին խնդրում է գրել ինտերնետում անվտանգ աշխատանքի այն կանոնը, որն ամենից շատ է իրեն դուր եկել և մի այնպիսի կանոն, որին չէր հանդիպել Ֆոքսիկը: Եվ շարունակում են նախադասությունը՝ Ես խոստանում եմ…	Աշակերտները գրում են թիթեռնիկի թևերին կանոններ և մի մասը փակցնում նախապես տեղադրված գունավոր ծաղիկների վրա, իսկ մյուս մասը բաժանում են զուգահեռ դասարանների աշակերտներին:	

Օհանյան կրթահամալիր,

Ինֆորմատիկայի ուսուցչուհի Մարիա Լիսիցինա